

ԱՐՅԱՎԱԶԴ
ՍԱՐԵՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

20

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԵՑՅԱՆ

ՀԱՄԱՇԵՆ


№ 1
ՀՈԿՏԵՄԲԵՐ
1991

ՀՐԱՍՏԱՐԱՎՈՐԻ Է
1991 Ք. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ

ԳՐԱԿԱՆ—ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ


ԳԻՆԸ 1 Ո.

Է Ր Գ Ի Ր



ԱՐԽԱԶԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
«ՀԱՄՇԵՆ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«Համշեն»
ԹԵՐԹԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՈՒԽՈՒՄ - 2011



Տպագրվում է «Համշեն» թերթի և Արխագիայի հայերի միության (նախագահ՝ Խ.Մինասյան) պատվերով
 Печатается по заказу газеты «Амшен»
 и Союза армян Абхазии (пред. Х.Минасян)

Սարեցյան Արտավազդ
 «Համշեն» -20. /Արտ.Սարեցյան.- Սուխ.: «Համշեն»
 թերթի գրադարան, 2011 թ: 48 էջ:

Հայկական գրական-լուսավորչական «Համշեն» պարբերաթերթի հիմնադիր-հրատարակիչ, Արխագիայի գրողների և լրագրողների միությունների անդամ Ա.Սարեցյանի սույն գրքույկը նվիրված է թերթի առաջին համարի հրատարակման 20-ամյակին:

Գրքույկի գաղափարական առաջնքը հայատառ թերթի կարելիք ունենալն է արխագիայի հայերի կյանքում:

Ընթերցող լայն շրջանների համար:

Брошюра «Амшен-20» члена союзов писателей и журналистов Абхазии Артавазда Айковича Сарецяна посвящена 20-летию выхода первого номера армянской литературно-просветительской газеты «Амшен».

Для широкого круга читателей.

© Արտ. Սարեցյան, «Համշեն» թերթի գրադարան
 © Арт.Сарецян, Библиотека газеты «Амшен»

Երախտագիտությամբ
 նվիրում եմ ծնողներին՝
 ՀԱՅԿ և ԳԵՂԱՆՈՒՇ ՍԱՐԵՑՅԱՆՆԵՐԻ՝
 իմ ամենաառաջին և ամենաիմաստուն
 խորհրդատուների անթառամ հիշատակին:
 Մերադիր՝ ձեր որդի Արտավազդ

Ա. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆ ԷՐ ՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

2011 թվականը նշանակալից տարի է «Համշեն» թերթի, եւ հուսով ենք, նաեւ ընթերցողների համար, քանզի այս տարի լրանում է նրա առաջին համարի լուսընծայման 20-ամյակը: Գուցե ոմանց համար դա ընդամենը 20 տարի է, իսկ մեզ համար՝ առանց չափազանցության՝ մի ամբողջ դարաշրջան՝ բեղուն ու հոգեխռով՝ իրադարձությունների զարգացումների գնահատմամբ եւ բովանդակության ընկալմամբ ու վերաիմաստավորմամբ:

Այո, մի ամբողջ դարաշրջան՝ քսան տարի առաջ՝ հեռավոր 1991 թվականի հոկտեմբերի 15-ին լույս տեսավ մեր թերթի* անդրանիկ համարը Երեւանի թիվ 6 տպարանում եւ նրա միջոցների հաշվին՝ կոլեկտիվի ողջույնի խոսքով (տպաքանակը՝ 5.000 օրինակ):

*Գլխագրի հեղինակն է հայտնի հայ նկարիչ Յուլալ Ղանդիլյանը (Կանթեղ):

Մինչ այդ, թերթի տարածումն ապահովելու համար, Համագործակցության մասին համաձայնագիր էինք ստորագրել Սուխումի եւ Սուխումի շրջանի հայկական դպրոցների հասարակական խորհրդի նախագահ Միսաք Կրիմյանի հետ, որն ուժի մեջ մտավ 1991 թվականի հունիսի 1-ից: Երկար ժամանակ պահանջվեց թերթի տպագրության տեխնիկական հարցերը լուծելու եւ օրենսդրական կողմն ապահովելու համար: Եվ այս

жизнь армянских школ; произведений литературы, изобразительного и фотоискусства, литературной критики, публицистики, читательских откликов.

10. Штаты и должностные оклады сотрудников редакции определяются решением общего собрания трудового коллектива газеты.

11. Редактор газеты избирается общим собранием трудового коллектива газеты.

12. Сотрудники газеты назначаются приказом редактора и утверждаются Советом общности армянских школ.

13. Редакция газеты "Амшен" осуществляет свою деятельность в тесном взаимодействии с Армянским литературным объединением Абхазии "Черноморская заря".

14. Решение вступает в силу с 1 июня 1991 года.

Председатель Совета общности армянских школ

/Кримилян М./



директор Лечкопской школы

/Карецян А./



Հատված Սուխումի եւ Սուխումի շրջանի հայկական դպրոցների հասարակական խորհրդի նախագահ Մ. Կրիմյանի եւ «Համշեն» թերթի հիմնադիր Ա. Սարեցյանի միջեւ կնքված Համագործակցության մասին համաձայնագրից

հարցում մեզ սատարեց Աբխազիայի կառավարության մամուլի վարչության պետ, հայտնի աբխազ արձակագիր, պետական մրցանակի դափնեկիր Շալոդի Աշինջալը:

«Համշենի» առաջին համարի առաջին էջում տպագրվել է Հայաստանի Հանրապետության մամուլի կոմիտեի նախարարի պաշտոնակատար Էդուարդ Սաֆարյանի ողջույնի խոսքը.

«Սրտանց շնորհավորում ենք համշենահայությանը գրական-լուսավորչական «Համշեն» թերթի լուսընծայման առթիվ: Մեծ ու անփոխարինելի է հայաստան թերթի դերն ու նշանակությունը սփյուռքահայության կյանքում: Եվ մենք ցանկանում ենք, որ թերթը ոսկեդեմիկ հայերենի դստրիկ համշենաբարբառի մասունքներով անսպառ լինի եւ որպես համշենահայության խոսնակ՝ Մայր Հայրենիք հասցնի ձեր սրտի խոսքն ու հայրենակարոտ հոգու երազանքը: Մենք ցանկանում ենք ու հավատում, որ «Համշենը» ազնվաշուք սերմնացանի պես հունդեր կշաղի բարեկամության ակոսներում եւ տա աստված, որ բերքն անսպառ լինի, լինի առողջ ու կենսատու», - ասված է նախարարի ողջույնի խոսքում:

Տպագրվել է բանաստեղծ Հովհաննես Գլակի՝ ընկերոջը՝ վերինյաշարացի Հարություն Ծատուրյանին նվիրված «Համշենցիներին» չափածո խոսքը:

Ասենք, որ «Համշենի» հիմնադրման առաջին օրվանից մեր անշահախնդիր գործընկերն է եղել աշխարհասփյուռ հայ մանուկների ամենասիրելի մանկապատանեկան «Կանչ» պարբերաթերթի խմբագրակազմը հայաշունչ մտավորական, համշենահայերի ջերմագին

բարեկամ Հմայակ Պետրոսյանի ղեկավարությամբ:

Սրտի անհուն թրթռում ու ջերմությամբ եմ հիշում. թերթի առաջին համարի տպագրության հարցերն էի քննարկում «Կանչի» խմբագիր Հմայակ Պետրոսյանի հետ, երբ վերջինիս աշխատասենյակ մտավ միջին տարիքի մի տղամարդ (ցավոք, նրա անուն-ազգանունը չեմ հիշում), որն, ինչպես պարզվեց, լուսանկարիչ էր: Նա նոր էր վերադարձել Արեւմտյան Հայաստանից, եւ անասելի դժվարություններ հաղթահարելով՝ կարողացել էր ոչ միայն լուսանկարել Սուրբ Լյառ Մասիսն «այն կողմից», այլեւ նկարը հասցնել Երեւան եւ շատ էր ուզում, որ այդ եզակի լուսանկարը տպագրվեր իր սիրելի «Կանչում»: (Փակագծերում ուզում եմ նշել, որ այն տարիներին հայի համար խիզախություն էր թուրքիայի սահմանը հատելը, արդեն չխոսելով Մասիս սարը լուսանկարելու մասին, ինչի համար կարելի էր շա՛տ դյուրությամբ հայտնվել թուրքական բանտում եւ այն էլ երկար ժամանակով): Եվ ես շատ զարմացա, երբ Հմայակ Պետրոսյանը մի քիչ մտածելուց հետո անսպասելիորեն... մերժե՛ց նրա խնդրանքը. «Ես մե՛ծ դժվարությամբ ու ափսոսանքով եմ մերժում, իսկ մերժում եմ, որովհետեւ այս լուսանկարը պիտի տպագրվի անպայմա՛ն «Համշեն» թերթի առաջին համարում, չե՞ որ համշենցիների արմատներն Արարատի ստորոտից են սկիզբ առնում»:

Այսպես Բիբլիական Մասիս սարի այս եզակի լուսանկարը Հմայակ Պետրոսյանի ցանկությամբ «Էրզիր» խորագրի տակ ծվարեց «Համշեն» թերթի առաջին համարի առաջին էջում հետեւյալ ջերմ բիբլիական մակագրությամբ.

յամբ. «Ձեզ նոր սիրտ կտամ, նոր հոգի կտամ ձեզ: Եվ կապրեք այն հողում, որ ձեր հայրերին եմ տվել: Իմ ժողովուրդը կլինեք դուք: Ես էլ ձեր աստվածը կլինեմ»:

Իսկական տոն էր «Համշենի» առաջին համարի տպագրությունը: Նոր թերթի ծնունդը ողջունեցին «Կանչ», «Գրական թերթ», «Ոգնի», «Հայաստան», «Հայ գրող» պարբերականները, Հայաստանի եւ Հայ գրողների միությունները... Թերթի տպագրությունը կարելուովում էր նաեւ այն փաստով, որ սովոր աբխազահայ հատվածը տասնամյակներ շարունակ սեփական մամուլ չէր ունեցել*:

Օգտվելով առիթից, երկու խոսք եմ ուզում ասել հայ արձակի վարպետ Սերո Խանգադյանի մասին, որովհետեւ Հայաստանի գրողների միությունում 1991-ի գարնանը մի քանի անգամ հանդիպել եմ նրան, եւ նա ոգեւորությամբ է ընդունել իմ՝ Աբխազիայում հայկական թերթ հրատարակելու մտահղացումը, խրախուսել է ինձ, չե՞ որ նա հոգեպես կապված էր համշենահայությամբ.

-Ճիշտ ես որոշել, զավակս,- օրհնեց նա պատգամելու

*20-րդ դարի սկզբին Սուխումում, որը հայ գրականության ու մշակույթի կարեւոր օջախներից էր, լույս էին տեսնում «Նոր կյանք», «Փարոս», «Կարմիր աստղ» պարբերականները: 1912 թվականին Խաչատուր Ավդաբեկյանը հիմնադրեց հայկական տպարան եւ սկսեց հրատարակել «Լույս» շաբաթաթերթը: Նրա ջանքերով Սուխումում ստեղծվեց նաեւ Աբխազիայի հայ ուսուցիչների խորհուրդը:

Ավելացնեմ, որ 1932-1935 թթ. Սուխումում լույս էր տեսնում «Սովետակի պիսաստեւ Աբխազիի» թերթը, որն ուներ նաեւ հայկական բաժին: Թերթի խմբագրական կոլեգիայի անդամներից էր ԽՍՀՄ գրողների միության անդամ Արշավիր Ջիդարյանը:

ՀԱՄԱՆԱԶԱՅ

ՖԻՂԱՅԻՆ



ՄԱՐՇԱՄՂԱՅԻ ՖԻՂԱՅԻՆ

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, օսմանյան բռնապետությունը իրագործելով հայերին հայաջուր հեղձարան գործողությունները՝ ձեռնարկեց Չարշամպայի հայերի հողերի բռնագրավումը, այնուհետև վերահսկելով կայսրության այլ վայրերից բերված մուսուլմաններին։ Վերաբնակ թուրքները կառավարության հովանավորությամբ վազում էին ավազակաբար սարելալերու, բարսում Մամուտի ու Չարշամպայի գավառների և մեծաթիվ այլ գյուղերի բնակչությանը, որը հայկազգիան գինվում ու պաշտպանում էր իր շահերը։

տան կոլում, սպանվում է Մելիսյոց իր չորս ընկերներով, իսկ մյուսները փախչում են։

Այս դեպքերը, որոնք տեղի են ունենում 90-ական թվականներին ձեռնարկում, Միևնույն դարձնում են ժողովրդական հերոս։ Կառավարությունը նշանակում է նրան հեծյալ գնդի առաջնության։ Նրան տարի բարենպաստը ծառայողը հետ Միևնույն իր եղբայրները հետ խաղաղ աշխատանքը սկսելուց պարզապես հրաժարվում են ծառայությունից։

Հրատարակելու իսկական աստիճանը հիմնական հեղափոխական ընդհանուր առթիվն Միևնույն անդամագրվել էր։ Դա նկատվում

ՉԱՐՇԱՄՂԱՅԻ ՖԻՂԱՅԻՆ

Հայ ինքնապաշտպանների կենտրոնը 90-ական թվականներին դառնում է Չարշամպայի Գարո-գարս գյուղը, որի գինված զուստը զինվազում է գյուղի բնակիչ Հովհաննես Միևնույնը։

Կարճ ժամանակամիջոցում Միևնույնը հաջողվում է վերացնել Լոգոնոցը և Քյուլուկ Հասանի ավազակախմբերը։ Միևնույնը ժամանակ Մամուտի գավառում անպատճի շարունակում էին բալանել հայ, հույն և բնիկ թուրք բնակչությանը Մելիսյոցի և Երբին Ակի ավազակներից։

Իշխանությունները, հաշի առնելով տարածաշրջանի բնակչության ճգնաժամային վիճակը, հայտնաբերում համապատասխան Միևնույնի ինքնապաշտպանության խոսքը պաշտոնապես ընդունում են, որպես բնակչության խաղաղությունն ապահովող զուստ։

Միևնույն իր խմբով հետապնդում է հիշյալ ավազակախմբերին և մեկ ամիս չանցած՝ վերադառնում Երբին Ակի խմբից։ Այնուհետև ձեռնարկեց Երբին գյուղի բարձրություններում 24 օր

է իշխանության նստից, և նրան աստիճան հասարակությունում են Միևնույնները տան վրա։ Փոխարանագրության ժամանակ զինվում է Միևնույն փոքր եղբայրը, իսկ երկուսն էլ հաջողվում է ապաստանել լեռներում, որ ինչից շուրջ են հավաքում հայ երիտասարդներին։

Աստուծոյնքը զեն ուղարկվում է պատերազմում իրականացնել Լոգոնոցի զինվարությանը, որի խաղաղասեր պատրաստությունը հետ ուղարկվում է հազարապետ Օսման բնից։ 80 հայ ֆիդայիներ լսվի են բռնվում 1000 հոգան բաղկացած զինված զուստի զեն և առկառ նրան նստահանել։

Այսպես վրա է հասնում ձեռքը։ Միևնույն իր քաջերին տեղափոխում է գյուղերում, ինչպես մտած Մամուտի (Մամուտ) գյուղում։ Օսմանի զորքը շրջապատում է Միևնույնը բազմաթիվ և մեծ դժվարությամբ կառավարվում թե՛ փրկվողով հայրերին։ Մամուտի բախում, ուստի տեղափոխում են նրան, գտնվում էին մայրը, լսել և եղբայրները։

Բարսում ժամանում է Միևնույնը Կարճալում

օրերի շուրջը։ Դրանով են բացատրում Համառնայի նվիրված տեղեկագրությունները։

Կարճը չի կանգնում, գնում է առաջ, տղա աշխարհներ են ծնում իսկապես, Բայ իմ Համառնայ տեղում շրջապատված՝ Փշաքաղվում է առաջ հողմերից, — ցավով ու արցունքով է դուրս Հայի Բաստարյան։

Գալով արևմտի, ասեմ, որ «Հայի համառնայական» լրիվ պատկանում է համառնայության կողմից։ Այդ աստիճան անմահության ուղիք է ձեռնի ձեռնի

պես, — համառնայական անպայման պիտի ունենա թերթ։

Նույն՝ 1991 թվականի հունիսին փոստով անսպասելի նվեր ստացա Սերո Խանգադյանից. 1989 թվականին լույս տեսած նրա «Կորած արահետներ» վիպակների եւ պատմվածքների ժողովածուն եւ «Հայրենապատումի» Դ հատորը ընծայականներով։ «Հայրենապատումի» 564-638-րդ էջերը նվիրված են համառնայական պատմությանն ու ներկա կյանքին։

Ահա մի քանի հատված նրանից ստացածս գրքերի ընծայագրերից։ Առաջինը («Հայրենապատումից»)։ «Արցախի այս աղետալի օրերին, երբ թուրք-ադրբեջանցիս ու Կրեմլը մեր զավակներին են սպանում, արի եղբք։ Սերո Խանգադյան, 28.5.91, Նորքի դղյակ»

Եվ երկրորդը («Կորած արահետներից»)։ «Սեւ ծովի ափերին սփռված իմ համառնայական եղբայրներին եւ զավակներին եմ նվիրում իմ այս գիրքը, հավատացած, որ աբխազ հին ու եղբայր ժողովրդի հետ հայը այնտեղ կպաշտպանի իր ու աբխազի ազգային շահերը։ Սերո Խանգադյան, 28.5.91, Երեւան»

Ուզում եմ նշել, որ նա շնորհակալությամբ ընդունեց թերթի առաջին համարը, որտեղ տպագրվել էր Վլադիմիր Վարդանյանի «Մոռացությունից փրկելու առաքելություն» հոդվածը՝ նվիրված Խանգադյանի առաջաբանով ու խմբագրությամբ լույս տեսած «Ձայն համառնայականի» առաջին գրքին։

Համարում տպագրվել են նաեւ Սարգենիկ Գեջյանի «Չարշամպայի ֆիդային» հոդվածը, «Սեւծովյան այգաբաց» գրական միավորման մասնակիցներ, ԽՍՀՄ գրողների միության անդամներ Հակոբ Գուրունյանի

Մանրիկ հուշը իմ տանում է 1967 թվականը։ Ես բաժնում էի երևանի համալսարանում և «Ձայն համառնայական» առաջին գրքի բարբառային մասի խմբագրման գործում ունեցա կոնկրետ առկաություն։ — «Գրական թերթում» կարգադրվ Ս. Խանգադյանի խոսքը, զանգահանելի նրան։ Դասախոսանք ընտա ու խոսքում ասելով։ Ինչո՞ւ, որ զանգահանելի նրան։ Զանգահանելի Հրավիրել տուն։ Շուրջ ովքե հավաքած թուրք տեղեկագրությունները և առաջարկեց բարբառային մասը։

(սկզբը՝ 1-ին էջում)

ՄՈՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓՐԿԵԼՈՒ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

դա՛հի Գուրգեն Մալաթյանի հուշապատումը եղիշ Չարենի և ուրիշների մասին։ Միևնույն հիշատակվող Մրմնակա Խաչենց Օչաճիկյան շրջանի Հայկական Առաջադրում են և հաստ լեռնի

Թիվ 1 «Համառնայ» 4-րդ էջը (հատված)

«Շուշան շողեր» պատմվածքը եւ Անդրանիկ Բահարյանի «Ուղերձ հատուցումի» բանաստեղծությունը, Նիկոլայ Դեմուրջանի գողտրիկ մանրապատումներից մի քանիսը, հայաստանցի հայտնի մանկագիր Վրեժ Վարդունու՝ նախադպրոցականներին հասցեագրված հանելուկները եւ այլ ստեղծագործություններ:

Այստեղ անպայման ուզում ենք երախտագիտությամբ մեր շնորհակալությունը հայտնել նրանց, ովքեր թերթի ստեղծման առաջին իսկ օրերից կանգնեցին մեր կողքին, օգնեցին մեզ. Կարլեն Յալանուզյան, Գուրգեն Բալայան, Սարո Գյողակյան, Զովհաննես Գլակ, Իշխան Ստեփանյան, Զայկազուն Ալվրցյան, Սիրավան Սեւունի, Ռազմիկ Իպեկչյան, Յուրի Շաղվամջյան, Մամիկոն Թոթյան...

Իսկ առջեւում ... Զիասթափություններ էին, պարտություններ ու, իհարկե, հաղթանակներ էին առջեւում: Զիրավի՝

*Դու եղար այնքան մաքուր, լուսավոր
Ո՛ր այնքա՛ն եղար Զայոց Կենաց Ծառ,
Որ ... թշնամիներ բազում ունեցար,
Ո՛ր հենց դրանո՛վ եղար ... բախտավոր:*

Այո, շատ զարմանալի ու տարօրինակ կլիներ, եթե բարեկամների հետ թերթը նաեւ ոխերիմ թշնամիներ չվաստակեր:

Եվ այդպես էլ պիտի լիներ, դա՛ էր օրինաչափն ու ճիշտը, քանզի այնքան մե՛ծ էր հայատառ թերթի ըստեղծման նշանակությունը տեղի հայ հատվածի համար, որ նրա կարելոթությունը շա՛տ լավ հասկացող

չարակամներն առանց հապաղելու գործի անցան՝ ըսկըսելով իրենց թերթահալած «գործունեությունը»: Եվ որքան էլ տարօրինակ չքվա՝ առաջին հերթին հենց դա՛ էլ կարելոթում է թերթի դերն ու նշանակությունը: Այլապես, հասկանալի է, որ ոչ ոք չէ՛ր չարախոսի, բանասարկություններով չէ՛ր թունավորի մեր արյունը, չէ՛ր դիմի ստոր միջոցների՝ թերթի տպագրությունը տապալելու համար:

Պետք չէ մոռանալ նաեւ բարդ քաղաքական ժամանակը. 1991-ի ավարտն էր, վրաց-աբխազական հարաբերությունները ծայրահեղորեն սրվել էին, վրացական ղեկավարությունը աբխազահայերին «կրկնակի թշնամիներ» էր հայտարարել՝ Վրաստանի ու, ամենակարեւորը՝ Զայաստանի շահերը «դավաճանելու» համար; Սուխումի շրջանի Լեչկոպ գյուղում մեծ դժվարությամբ հաջողվեց կասեցնել հայ-վրացական ընդհարումը; արդեն կային մարդկային զոհեր; չափազանց ակտիվացել էին հանցագործ տարրերը...

Մահացու սպառնալիքներ էին հնչում նաեւ մեր հասցեին:

Եվ այս լարված պայմաններում Երեւանում լույս տեսան «Համշենի» հաջորդ երկու համարները, որոնք բարձր գնահատվեցին հայ մամուլի ցուցահանդեսում:

Այս համարներում տպագրվել են Զակոբ Գուրունյանի «Շիրագյան հուշեր» շարքը, Վլադիմիր Վարդանյանի «Անելիքներն ավելի շատ են» հարցազրույցը Գուդաութայի «Համշեն» շրջանային բարեգործական ընկերության նախագահ Աշոտ Չեբեյանի հետ եւ Միշա Մինա-

սյանի «Սեւծովամերձ հայերը» գրքին նվիրված «Գիրք համշենցիների մասին» գրախոսականը, երեւանցի հեղինակներ Իշխան Ստեփանյանի «Լափտուր խոզը» պատմվածքը եւ Գուրգեն Բալայանի բանաստեղծական շարքը, Անդրանիկ Բահարյանի՝ տեղի հայկական գրական միավորմանը նվիրված «Սեւծովյան այգաբաց» հոդվածի առաջին մասը, Գրիգոր Թորունցի «Հայ գրականությունը աբխազերեն» հոդվածը եւ այլ նյութեր ու գրական ստեղծագործություններ:

Բ. ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1992 թվականի օգոստոսի 14-ին սկսվեց վրաց-աբխազական պատերազմը, որն ահավոր արհավիրք ու չարիք էր Աբխազիայի ժողովրդի, այդ թվում նաեւ տեղի հայ ազգաբնակչության համար:

Վրացական այսպես կոչված գվարդիականների «հսկողության» տակ հայտնված հայաբնակ շեն ու ծաղկուն գյուղերը՝ Լաբրան, Հայկական Աթարան, Արակիչը, Լեչկոպը, Գումիստան, Աջադարան եւ այլ բնակավայրեր, համեմատաբար կարճ ժամանակահատվածում դաժանորեն եւ անխնա թալանվեցին ու ավերվեցին, իսկ խաղաղ բնակչությունը,՝ տղամարդ թե կին, ջահել թե ահել,՝ ենթարկվեց աննկարագրելի բռնությունների ու անարգանքների, եւ հատուկ ուզում ենք շեշտել՝ իր ազգային պատկանելության համար: Մարդազոհությունն ու սպանություններն արդեն սովորական, առօրեական երեւույթներ էին դարձել:

Մեր վերաբերմունքը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ եւ դրանց զարգացման հնարավոր «տարբերակները» մենք շարադրեցինք 1992 թվականի սեպտեմբերի 11-ին Երեւանի «Մ.Վարանդեան» տպագրատանը հրատարակված «Համշենի» 4-րդ համարում լույս տեսած «Մինչեւ ե՞րբ պիտի քանդվի մեր տունը» հոդվածում, որը նույն օրը արտատպվեց «Ազատամարտ» շաբաթաթերթում: Ահա մի հատված հոդվածից.

«Դաժան ճակատագրի բերումով այսօր թալանվում եւ ավերվում է համշենահայի տունը: Եվ մի՞թե դա արվում է նրա ունեցվածքին տիրանալու ազահ տենչով միայն... Երանի՜ թե, ներիր ինձ աստված, այդպես լինեք: Բայց ավելի հեռուն գնացող նպատակներ են հետապնդվում, ասենք թե հայերի համար անտանելի պայմաններ ստեղծել, եւ ... համշենահայը ստիպված կլինի թողնել տունն ու տեղ եւ հեռանալ...,- ցավով արձանագրել ենք մենք եւ մեր իսկ հարցապնդմանը պատասխանել այսպես՝ տարակուսած ավելացնելով,- այո, այսօր թալանվում է համշենահայի տունը: Կան մարդկային գոհեր: Բայց ախր սթափ դատողությունը հուշում էր, որ նման իրադարձություններն անխուսափելի են եւ պետք էր բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով նախապատրաստվել՝ ապահովելով հայ ազգաբնակչության անվտանգությունը: Սակայն մենք նորից ապավինեցինք ինչ-որ երկնային ուժի, ինչ-որ հրաշքի... Եվ նորից ու կրկին, մեր տեսածը, զգացածը եւ, ամենակարեւորը, հասկացածը դաս չեղավ»:



ԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆՔ ԱԲԽԱԶԱՀԱՅ

Կովկասը
վոր հայեր
(
Կրպյան
Ներք հայ
երմուհի
խազիայ
թախի-թ
աքխազ
որի Նախ
ճաղորդ
հի տեղ
Գաղ
խազիայ
Հայաստ
րը կարո
թյան հե
տախյան
բարձր ղ
թյամբ, ի
իրարդու
նը հատ
կայացու
Նել այս
վարորդ
կան զոր
ուածներ
աւել(տե
պաշտոն
դյուս չ
Հայաստ

ի- յալս համարը պիտի ձևավորված ղար Ճեռքերով արխազական հողն են թիզ առ կրաշարժից տուժած հայրա-
 Գեղեցիկ ու սիրելի տոնին՝ սեպ- թիզ, պտղունց առ պտղունց քար ու մամուռից խին ցուցաբերած զգալի ն,
 ին: Պիտի լինե՞ր: Սակայն... մաքրում- ազատում: Ել այքերի լույսն են կրթյալոց քաղմիցս անդրա-

15

րային գրադարանի աշխատակցուհի Սաթենիկ Գեջյանի «Գյումուշխանեցի Ավոն», բանասիրական գիտությունների թեկնածու Ժորա Էրուքյանի «Սուխումի հայկական միջնակարգը», Հովհաննես Թորոսյանի «Կրթության հիմքը մայրենին է» բովանդակալից հոդվածներն ու այլ նյութեր, ինչպես նաև չափածո ստեղծագործություններ:

«Համշենի» այս համարի տպաքանակը*, մեծագույն դժվարություններով հաղթահարելով բազմաթիվ արգելքներ՝ մենք կարողացանք Երեւանից ինքնաթիռով հասցնել Ադլեր, իսկ այնտեղից էլ ձկնորսական նավով՝ Սուխում՝ բարի ու սրտացավ խոսքի ծարավի մեր հայրենակիցներին, որոնք խորին երախտագիտությամբ ու շնորհակալությամբ ընդունեցին այն: Ավելորդ է ասելն անգամ, որ թերթը ձեռքից-ձեռք էր անցնում:

Ինչ խոսք, մեր կյանքի համար վտանգավոր ու արկածախնդիր քայլ էր դա, շատերի համար՝ անհասկանալի ու նույնիսկ ցայտօր դատապարտելի**: Բայց, խորապես համոզված էինք եւ համոզված ենք՝ այդ քայլը օդուշրի պես անհրաժեշտ էր ու միակ ճիշտը եւ, ինչու չէ, թերեւս հեռանկարայինը, որովհետեւ դա, առաջին հերթին, մեր հոգու պարտքն էր, ինչպես նաեւ մեր թերթի պատիվն ու նրա գոյատևելու բարոյական իրավունքը:

*Տպաքանակի մի մասը ընկերներիս օգնությամբ տարածվեց Ռուսաստանի հարավում:

**Խոսքը Սուխումում գտնվող ծնողներիս անվտանգության մասին է:

Գ. ԸՆԹԵՐՑՈՂԸ

ՀԱՅԱԼԵԶՈՒ ԹԵՐԹԻ ԷՐ ԾԱՐԱՎԻ

1992-1993 թվականների Աբխազիայի ժողովրդի հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո հանրապետության շրջափակման պայմաններում շարունակվեց «Համշենի» տպագրությունը Սուխումում, իհարկե, ելնելով տեղում առկա հնարավորություններից: Իսկ հնարավորությունները, մեղմ ասած, շատ էին սուղ - չկար թուղթ, համակարգչային շարվածքի մասին կարելի էր միայն երազել, թույլ էր տեղի տպագրական բազան (տպարանները թալանվել ու ավերվել էին) եւ այլն: Եվ այս պայմաններում «Ռեսպուբլիկա Աբխազիա» թերթի գլխավոր խմբագիր Վիտալի Զամագուայի եւ նրա առաջին տեղակալ Սերգեյ Սարգլսյանի անմիջական օգնությամբ եւ Աբխազիայի հերոս Սերգեյ Մաթոսյանի աջակցությամբ մենք սկսեցինք «Համշենի» տպագրությունը ռուսերեն լեզվով:

Ասենք, որ թերթի տպագրության բարձր եղանակը ժամանակի պահանջներին արդեն վաղուց չէր համապատասխանում եւ, բնականաբար, տպագրական որակը բավականին ցածր էր...

Բայց ա՛յն ժամանակ ... մի՞ թե կարելորդ տպագրության եղանակն էր կամ թղթի որակը: Կարելորն այն էր, որ այդ անորակ թուղթը կա՛ր եւ հնարավոր էր թերթը հրապարակել:

Կարելորդ «Համշենի» տպագրության փաստն էր, թերթի վերածնունդը:

Եվ մենք ոգեւորված անցանք գործի: Տունուտեղ մոռացած՝ շրջանից-շրջան էինք գնում, գյուղից-գյուղ,

միայն թե գրեի՛նք, միայն թե հրատարակեի՛նք... Հիրա-
վի, կարծես թե հենց մեր մասին է ասված.

*Двое суток не спать, двое суток шагать
Ради нескольких строчек в газете.*

Հասկանալի է, որ ինչքան էլ թերթի ոգին լիներ հայ-
կական՝ ՌՈՒՍԱԼԵՉՈՒ «ՀԱՄԱՇԵՆ» ԱՐԴԵՆ ՉԵՐ ԿԱ-
ՐՈՂ ԲԱՎԱՐԱՐԵԼ ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ

АМШЕН

ГАЗЕТА АРМЯНСКОЙ ОБЩИНЫ РЕСПУБЛИКИ

УВАЖАЕМЫЕ ЧИТАТЕЛИ:

Многие из вас помнят, что до грузино-абхазской вой-
ны у нас выходила литературно-просветительская газе-
та «Амшен». Печаталась она в Ереване на армянском
языке 5-тысячным тиражом. Ее последний номер вы-
шел сразу после начала войны — в сентябре 1992 года,
в котором были опубликованы статьи «Мы в ответе за
абхазских армян» (Айказун Алардзи) и «До каких пор
рушится нашему дому?» (Артёмов Сергей), реально
отражавшие сложившуюся в Абхазии политическую си-
туацию и прогнозировавшие ход ее дальнейшего развития.
Газета «Амшен» была принята наследником еженеде-
льника «Лугас», выходившего в начале 10-х годов наше-
го столетия в Сухуме (см. публикуемую в этом номере
заметку «Первая армянская типография»). И мы реши-
ли возобновить издание газеты «Амшен».

Не все знают, что Амшен — труднопроходимая об-
ласть в Западной Армении — историческая родина ныне
проживающих в основном в Абхазии и Краснодарском
крае Российской Федерации армянских армян, называ-
емых так, по мнению некоторых ученых, нап-
ринер, академика Левона Хачикяна, по имени князя Глг-
на Амштун — их предводителя (Амашен — Амшен).
И название нашей газеты оправдано, в первую очередь,
линией с этой исторической точкой зрения. Оправдан и
ее выход именно в Абхазии, поскольку абхазы армяночки
и обогрели, поделились куском хлеба с нашими предка-

ОСТАТЬСЯ ЧЕЛ

Война не только унесла
жизни многих людей и нане-
сла огромный ущерб городам
и селам, но и катком прои-
лась по человеческим ду-
шам и душам. Естественно,
она изменила психологию че-
ловека. Поэтому не удивитель-
но, что сегодня мы, порой, не
узнаем тех, кого когда-то хо-
рошо знали. Поражаемся их
поступкам и «неожиданным
проявлениям».

Конечно, в экстремальных
ситуациях люди лучше мобили-
зуются и исторгают из себя
все то хорошее, на что
способны от природы, другие
же, наоборот. Дело в том, что су-
щество тех, кто становится луч-
ше и совершеннее, держится
на стержне человечности; дру-
гие же, напротив, теряют его.

Их «несет». Это стра-
шно. Но гораздо страшнее, что
не пытаются остановиться
между тем, уже оди-
ннадцатый, один только (с
определением своего соседа)
делают огромные дела. Это
только «дмалчиз», это —
часть преодоления негатива
последствий войны. За-
конечно, не в том, чтобы
даваться самосожранию
оно нужно только на пр
Это — то же, что и оц
позиции в шахматах, за к
фой следует обдумывание
вариантов, а затем и выбор
Работа по изведению «в
реинтегирования» в конеч
счете должна занять, же
мум времени. «Недостат
встать, надо еще и про-
таться». Все хорошие со

ՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՀԵՆՑ ԻՄ ՕՐԸՍՕՐԵ ԽՍՏԱ-
ՑՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ. ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԸ ՀԱՅԱԼԵՉՈՒ
ԹԵՐԹԻ ԷՐ ԾԱՐԱՎԻ, ԵՒ ՄԵՐ առաջնահերթ խնդիրը նրա
արդարացի պահանջը կատարելն էր:

Եվ ահա 1998 թվականի հունիսին օֆսեթ տպագրու-
թյամբ լույս տեսավ հետպատերազմյան «Համշենի» ա-
ռաջին հայատառ համարը, որտեղ հրապարակվեցին
Մայիսի 28-ի ազգային տոնին նվիրված «Համաժողո-
վըրդական խիզախում» հոդվածը և մեր չափածո բնա-
պատկերները: Համարը բացվում է Աբխազիայի Հան-
րապետության նախագահ Վլադիսլավ Արծինբայի՝ մեր
թերթին տված «Միահամուռ ջանքերով մենք կկա-
ռուցենք անկախ պետություն» հարցազրույցով*:

Վերջապես մեր փայփայած վաղեմի երազանքն
իրականացավ. ԱԲԽԱՉԻԱՅՈՒՄ ԴՐՎԵՑ ՀԻՄԵԸ ՀԱՅԵ-
ՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ:

Եվ այս գործում մեզ անգնահատելի ծառայություն-
ներ մատուցեցին երիտասարդ գիտնականներ, եղբայր-

*Վ. Արծինբայն միշտ էլ ուշադիր է եղել մեր թերթի նկատմամբ:
Հիշում եմ. ֆինանսական դժվարությունների պատճառով որոշ
ժամանակով ընդհատվեց մեր թերթի տպագրությունը: Եվ դա չէր
վրիպել Վ. Արծինբայի ուշադրությունից. ինձ հաղորդեցին, որ նա
անհանգստացած է հայկական թերթի ճակատագրով, որի գոյու-
թյունը խիստ կարեւորելով՝ խնդրում է ամեն ինչ անել հրատա-
րակությունը վերսկսելու համար: Նա ընդգծել էր, որ խոսքը հատ-
կապես հայկական թերթի մասին է:

Ես չեմ մոռանում Վլադիսլավ Արծինբայի՝ պատգամի պես հնչող
խոսքը. հայկական թերթի հրատարակությունը Աբխազիայում
կարեւոր հասարակական-քաղաքական նշանակություն ունի:

1995 թվականի նոյեմբերյան համարը (հատված)

ՀԱՄԱԵՆ ԱՄՇԵՆ

ГАЗЕТА АРМЯНСКОЙ ОБЩИНЫ РЕСПУБЛИКИ АБХАЗИЯ

Владислав Ардзинба:
«Совместными усилиями
мы построим независимое
государство»



«Активизация в последнее время диверсионно-террористической деятельности с темной берега Грузии на территории Абхазии, вызывает тревогу у граждан нашей республики. Многие разочарованы результатами установившихся в республику визитов представителей различных международных организаций. Не вызывает оптимизма и непоследовательная позиция Тбилиси в переговорном процессе. Выясним, что люди говорят, а делают другие?»

«Действительно, ни международное сообщество, ни Россия ни разу не дали должной оценки действиям грузинских властей, развернувших необъявленную диверсионно-террористическую войну на территории Абхазии. Об этом свидетельствуют и Резолюция Совета Безопасности, и последнее решение СПТ СНГ».

Более того, Грузия оказывается всеотрицательная поддержка, как политическая, так и политическая. В частности, в ультимативном Резолюции СПТ от 29 апреля 1998 г. снятие санкций.

введенных в отношении Абхазии, ставится в непосредственную, прямую зависимость от возобновления процесса возвращения беженцев. Это является грубым попранием всех соглашений, подписанных сторонами, которые предполагают пакетное урегулирование вопросов беженцев и государственно-правовых взаимоотношений Абхазии и Грузии. Естественно, в подобных условиях Тбилиси не желает идти на компромисс, рассматривая решение существующих проблем не за столом переговоров, а путем оказания давления на Абхазию.

Однако этот путь является бесперспективным. Нарад Абхазии, ценой невероятных усилий и жертв отстоявший свободу и независимость Родины, не допустит восстановления национальной независимости Абхазии от Грузии.

«В то же самое время, когда в Абхазии вековой, а неслучайный своей массе, сбежал все, что было, оставились невинность, с одной стороны и правды, с другой стороны посетители республике, и чем вы бы не хотели, с одной стороны Абхазией стоит не менее сложная, чем

ներ Հարություն եւ Իշխան Ավետիսյանները, որոնք ապահովեցին խնդրի տեխնիկական կողմը:

«Համշենի» հիմնադրման առաջին իսկ օրվանից մեր նպատակն է եղել ՕԳՏԱԿԱՐ թերթ ստեղծելը՝ բազմաշերտ լրատվությամբ հագեցած: Մենք աշխատել ենք յուրաքանչյուր հայկական տուն ուրախություն բերել: Հայաստան, Արցախ, Սփյուռք, համահայկական հիմնահարցեր, տեղի քաղաքական ու մշակութային կյանք եւ, իհարկե, ՆԱԽՆՅԱՑ ԲՆՕՐԻԱՆ - ահա մեր թերթի հիմնական եւ առանցքային թեմաները:

Մենք միշտ էլ աշխատել ենք մեր հրապարակումներով լրացնել դպրոցների կրթական ծրագրերի պահանջները, նպաստել հայագիտության զարգացմանը հայկական կրթարաններում, մեր հայրենակիցների մեջ սիրո եւ հպարտության զգացում սերմանել հայկականի նըկատմամբ: Եվ ուզում ենք հավատալ, որ դա մեզ հա-

18.12.2009
Издаётся с октября 1997 года

ՊԱՐՔԵՐԱԾԵՐԹ ԿՈ
«АМШЕН» - ГАЗЕТА



Լուսավարժ Ա. Սարգսյան

Ա.Բ.ԽԱԶԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ
ՍԵՐԳԵՅ ԲԱԳԱՓՇ

Ծնվել է 1949 թվականին մարտի 4-

«Համշենը» միշտ էլ
անդադարձել է հանրապետության
կարեւոր իրադարձություններին

П

Се

ПС

Президи
Республики
председитс
В посла
Карабахской
президента
выборами гл
весьма суще
послужат да

ԱԲ

Արիստակ
բազմաթիվ
դաշնային ծա
վարչության մ
րբ:



ՊՈԶԻՄ

ՀԱՄԱԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԽԻՋԱՆՈՒՄ

Մայիսի 28-ը Հայաստանի և հայ ժողովրդի
նորագույն պայծառության մեջ քաղվել
առանձնահատուկ նշանակություն ունի:
Ի հիշատակ հայտնաբերված հայտնաբերված հայտնաբերված

Հակադ
հայկա
նախադ
փոքր
հնազան
զուգահե
նախադ
մեծությ
մեծությ

1998 -ի հունիսին սկսվեց հայատառ «Համշենի» տպագրությունը

ջողվել է եւ հաջողվում է ցայսօր:

Թերթի կարելորագույն ուղղություններից մեկը հայ-աբխազական մշակութային կապերի ամրապնդումն է, երկու ժողովուրդների մերձեցումը: Այդ նպատակով «Համշենի» էջերում տպագրվել են հայտնի աբխազ հեղինակների ստեղծագործությունների հայերեն եւ ռուսերեն թարգմանությունները. դասականներից՝ Դրմիտ Գուլիա, Բագրատ Շինկուբա, Շալվա Ծըլջբա, Իվան Թարբա, ինչպես նաեւ ժամանակակից հեղինակներից՝ Բորիս Գուրգուլիա, Մուշկի Լասուրիա, Վլադիմիր Չանթարիա, Ջումա Ախուբա, Մուշկի Միքաիա, Ստանիսլավ Լակոբա, Գունդա Կուծնիա, Սերգեյ Ազընդիա, Վիտալի Ամարշան, Վախթանգ Ափիագոու, Անատոլի Լագուլաա, Դաուր Նաճղեբիա, Վիտալի Շարիա, Վիկտոր Կոկոսկիր... Անքակտելի հոգեկան թելերով էր կապված մեր թերթի հետ ճակատագրի բազմաթիվ դաժան հարվածների դիմացած բանաստեղծ Վլադիմիր Մաանը, որը մի առանձին սեր էր տածում հայ ժողովրդի նրկատմամբ: Նա մեր ամենօրյա այցելուն էր եւ իր ողբերգական մահվանից մի քանի ժամ առաջ կրկին այցելել էր մեզ՝ տպագրության ներկայացնելով նոր բանաստեղծությունների մի փունջ:

Թերթին ակտիվորեն թղթակցել են հայտնի լրագրողներ Սերգեյ Սարգսյանը, Տատյանա Տրոյանովսկայան եւ Վլադիմիր Ծվիժբան, Լեյլա Փաչուլիան եւ Լիլիանա Յակովլեան, Անահիտ Գոգոբյանը, արվեստի վաստակավոր գործիչ Վալերի Չոլարիան, արվեստաբանության դոկտոր-պրոֆեսոր Ալեքսեյ Արզունը, ակադեմիկոս Բաջգուր Սագարիան, մշակույթի վաստակա-

վոր գործիչ Արման Դանիելյանը, Աբխազիայի պետական թանգարանի տնօրեն, պատմագիտության դոկտոր Արկադի Ջոփուան, Աբխազիայի Հանրապետության վաստակավոր դերասան Սերգեյ Գաբնիան, հայտնի ռուս արձակագիր Կոնստանտին Գերդովը, բանաստեղծներ Իգոր Կաչալովը, Գեորգի Զեսյանը, Նիկոլայ Պատուլիդին, Կոնստանտին Ֆիլիդին, ֆուտբոլի հայտնի մրցավար Գրիգորի Պողոսյանը եւ այլ հեղինակներ:

«Համշենի» էջերը, բնականաբար, միշտ էլ բաց են եղել Աբխազիայում եւ Կրասնոդարի երկրամասում ըստեղծագործող հայ հեղինակների՝ Անդրանիկ Բահարյանի, Ժորա Էրոբյանի, Վազգեն Կանսուլյանի, Չորիկ Զեշիշյանի, Լյուդվիգ Զյուլյանի, Սահակ Կալայջյանի, Սեդա Բաղդասարյանի, Հովհաննես Հովակի, Երվանդ Ղանդիլյանի, Արամ Կանսուլյանի, Սաշա Մկրտչյանի (Չարգանդ), Հայկ Ռահանյանի, Շամիրամ Զեսյանի, Անդրանիկ Կոնդակչյանի, Խաժակ Սիմոնյանի, Գայանե Աթոյանի, Ռիմա Ալեքսանյանի, ինչպես նաեւ մեզանից հեռացած Հակոբ Գուրունյանի, Էդուարդ Լուսպարյանի, Ռաֆիկ Աթուլյանի, Վլադիմիր Ավչյանի, Սերգեյ Կոնդակչյանի, Հովհաննես Թորոսյանի եւ այլոց համար: Առանց չափազանցության ուզում ենք շեշտել, որ «Համշենում» հրապարակվելը աբխազահայ ստեղծագործողների միակ (սակավ բացառությամբ) հնարավորությունն է ընթերցողներին տպագիր ներկայանալու:

Նույնը կարելի է ասել նաեւ սկսնակ հեղինակների մասին, եւ հատկապես կուզենայինք նշել շնորհալի Նինա Գասպարյանին, որի գողտրիկ հրապարակումները մի

առանձին հմայք են հաղորդել մեր թերթին եւ, բնականաբար, շերմությամբ ընդունվել ընթերցողի կողմից: Նրա, նաեւ մի քանի պատանի ստեղծագործողների՝ «Համշենի» էջերում լույս տեսած թոթովանքերն ամփոփվել են 2004 թ. Ալեքսանդր Անկվաբի հովանավորությամբ Սուխումում լույս տեսած եռալեզու՝ արխագերեն, ռուսերեն եւ հայերեն, իր տեսակի մեջ եզակի «Ծիծեռնակներ» չափածո գրքում:

Առանձին հետաքրքրությամբ են կարդացվում 1992-1993 թթ. վրաց-արխագական պատերազմի մասնակից Միսաք Զյուլյանի՝ մարշալ Բաղրամյանի անվան հայկական գումարտակի մարտական առօրյան նկարագրող գողտրիկ մանրապատումները:


Վերջերս մեզ ուրախացրեց ու ոգևորեց շնորհաշատ պատանի լրագրող, աշակերտուհի Էլենուրա Գիլոյանի հայտնությունը:

Հպարտությամբ ու երախտագիտությամբ եմ ուզում նշել մեր ավագ ընկերոջը՝ Անդրանիկ Բահարյանին: Զընայած առաջացող տարիքին, նա երիտասարդական ավյունով շարունակում է ստեղծագործել՝ խորիմաստ գրախոսականներով եւ բանաստեղծական նոր ու հրաշալի շարքերով ներկայանալով ընթերցողին: Ուզում եմ անպայման շեշտել, որ մտքի դասական պարզության հասած վարպետը վե՛ր է մանր ու ճղճիմ կեցվածքից, ճոռմախոսությունից եւ նախանձելի աշխատասիրությամբ ու պատասխանատվությամբ իր աստվածատուր շնորհքն ի սպաս է դրել հայոց խոսքի պանծացմանը:

Դ. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ




Արխագահայ հատվածի գրական-մշակութային կյանքում նըկատելի երեւոյթ է «Համշեն» թերթի գրադարան» մատենաշարի հիմնադրումը, որի շնորհիվ «Սեւծովյան այգաբաց» գրական միավորման անդամները եզակի հնարավորություն ունեցան հրատարակելու իրենց ստեղծագործություններն ու առանձին գրքերով ներկայանալու տեղի հայ ընթերցողին: Այսպես, սույն մատենաշարով լույս են տեսել Հովհաննես Թորոսյանի («Կանչ»), մեր («...որ մաքուր մնամ», «Ափացիա»), Սեդա Բաղդասարյանի («Իսկ ես արդեն սկսել էի հավատալ»), Ժորա Էրուքյանի («Աշուն», «Հոգու երկիր»,



«Թռչնի երգը»), Անդրանիկ Բահարյանի («Աշխարհի ամենաքաղցրը խոսքը»), Հայկ Ռահանյանի («Առակներ եւ գրույցներ»), Երվանդ Ղանդիյանի («Բարության լույսեր»), Հարություն Եթումյանի («Մանիներ»), Հովհաննես Հովակի («Բանաստեղծություններ», «Ես հավատում եմ խղճի հրաշքին»), Ռաֆիկ Աթուլյանի («Ոսկե կաթիլներ»), Անդրանիկ Կոնդակչյանի («Շահումյանովկա-100»), ինչպես նաեւ «Գրական Համշեն», «Սուխումի հայկական միջնակարգը» ժողովածուներն ու բազմաժանր հավելվածները եւ այլն:

Տպագրության ենք պատրաստել Սահակ Կալայջյանի «Արյան կանչը», Հովհաննես Թորոսյանի «Եղեգի երգը», Գրիգոր Օքսուզյանի «Սիրտս գարուն է» ժողովածուները եւ «Սեւծովյան այգաբաց» ավանսախը:

Հայ եւ աբխազ ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ նշանակալից երեւույթ էր



Գրական Համշեն



3.2005

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍՅԱՆ

Կ Ա Ն Չ

ԵՐԵՎԱՆ

ձեռնություններով պիտի հանդես գան նաեւ հեղինակները՝ պատասխանատվությամբ ու խստապահանջ վերաբերմունքով, եւ, առաջին հերթին, հենց իրենց նըկատմամբ:

Ե. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ՊԱՅՊԱՆՈՒՄՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ Է

Թերթը կենդանի օրգանիզմ է՝ մշտապես զարգացող ու կատարելագործվող: Եվ այդ ճանապարհին վերելքները եւ անկումները բնականորեն անխուսափելի են: Ինչ խոսք, թերութիւններից գերծ չէ նաեւ «Համշենը»: Եվ այդ թերութիւններն, անշուշտ, շատերն են տեսնում, եւ լա՛վ է, որ տեսնում են: Բայց ... տեսնել կա, տեսնե՛լ էլ կա: Բարեկամներն, իհարկե, խորհուրդներով աշխատում են օգնել մեզ, սատարել, հուսադրել, ինչի համար մեծապես շնորհակալ ենք ու երախտապարտ:

Բայց ավա՛ղ ու ա՛խ, քիչ չեն նաեւ նրանք, ովքեր չարախնդրությամբ ու բանսարկութիւններով փորձում են հասնել իրենց վաղեմի՝ թերթը փակելու նպատակին: Այո, նրանք տեսնո՛ւմ են միայն: Իսկ մենք զգո՛ւմ ենք՝ հոգով, սրտով ու նաեւ ցավով: - Հոգո՛վ ու սրտո՛վ, որովհետեւ թերթը կյանքի արժեք ու գին ունի մեզ համար, մեր էութիւնն է, մեր ապրած տարիների իմաստն ու բովանդակութիւնը: ցավո՛վ, որովհետեւ թերութիւնները վերացնելու համար ֆինանսական ու որակական լուրջ հնարավորութիւններ ու ներդրումներ են անհրաժեշտ, - մի բան, ինչից, դժբախտաբար, զուրկ է եղել «Համշենը» հիմնադրման առաջին իսկ օրվանից:

Մեր ժողովրդի թշնամիները միշտ էլ եւ առաջին հերթին աշխատել են ոչնչացնել հայ ուսուցիչներին, հայ խմբագիրներին, հայ գրողներին... Նրանք ավերում եւ հրկիզում էին հայկական թերթերի խմբագրութիւններն ու տպարանները, գրադարանները, հայատառ թերթերն

ու գրքերը: ՀԱՅԿԱԿԱՆԸ ՈՉՆՉԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ, ՊԻՏԻ ՈՉՆՉԱՅՎԵԻՆ ՀԱՅՈՑ ԽՈՍՔԸ ԿՐՈՂՆԵՐԸ: Մենք դա լա՛վ գիտենք: Վկան մեր պատմութիւնն է, վկան հենց մե՛նք ենք:

